ՀՀ ներքին գործերի նախարարության
ֆինանսաբյուջետային վարչության պետ
Վարդան Պետրոսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներքին գործերի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ
Հերմինե Եղիշեի Անտոնյանի կողմից 2024թվականի 2-րդ եռամսյակում
կատարած աշխատանքների վերաբերյալ

2024թ. 2-րդ եռամսյնակի ընթացքում իմ կողմից ՀՀ Շիրակի մարզի,ք. Գյումրի քաղաքի Ղորղանյան 91/1 աշխատավայրում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Կազմել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի պահպանման ծախսերի և սոցիալական փաթեթի գծով նախատեսված ծախսերի 2024 թվականի տարեկան նախահաշիվները, ներկայացրել հաստատման ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:
2. Ընդունել եմ Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի աշխատողների հունվար , փետրվար, մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, կատարել աշխատավարձերի, պարգևատումների, գործուղումների, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխհատուցումների հաշվարկները, կազմել համապատասխան կուտակիչ տեղեկագրեր և վճարման ցուցակներ:
3. Կատարված հաշվարկների հիման վրա կազմել եմ բյուջետային հայտ-պահանջագերը և "Mulberry" էլեկտրոնային համակարգով ներկայացրել ՀՀ ՆԳՆ ՖԲՎ ոստիկանության Շիրակի մարզային վարչության:
4. Գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգ եմ մուտքագրել 2024թ. տարեկան նախահաշիվները և ժամանակացույցերը:Ներկայացված հայտ- պահանջագրով ֆինանսավորումների հիման վրա հաշվից կատարել եմ աշխատավարձի,գործուղման, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխատուցումների,սոցիալական վճարի,եկամտային հարկի և այլ վճարների փոխանցումները:
5. Վարել եմ աշխատակիցների աշխատավարձերի հաշվարկման անհատական քարտերը,անհրաժեշտության դեպքում տրամադրել միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքներ,ծառայողական տեղափոխումների և ծառայությունից արձակվելու դեպքում կազմել դրամանակ վարձակալության վկայականներ,կատարել վերջնահաշվարկ:

6. Հաշվարկել եմ ՀՀ ՆԳՆ ՈՇՄՎ Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի ծառայողների/աշխատողների/ սոցփաթեթի ամենամսյա գումարները:
7. Կատարել եմ հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների գրանցման և հաշվառման աշխատանքները,դրանք ստանալու համար դուրս գրել լիազորագրեր,վարել լիազորագրերի հաշվառման մատյանը:
8. Ներկայացնում եմ եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվետվությանը ՀՀ պետական եկամուտների կոմիտե:
9. Իրականացրել եմ անմիջական ղեկավարի կողմից հանձնարարված աշխատանքներ:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Հերմինե Անտոնյան

« 01 » հուլիս 2024թիվ

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները գնահատում եմ ________:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ Վարդան Պետրոսյան

« » հուլիս 2024թիվ